

ԼՈՒԻ ԶԱՂԱԶ-ԱՄՐՈՑԻ ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ ԲԱՂՆԻՔՆԵՐԸ

Ի. Գ. ՂԱՐԻՅԱՆ

Արևելքի երկրներում ընդհանրապես, իսկ Հայաստանում մասնավորապես, միջին դարերի ընթացքում քաղաքային բնակչության կենցաղում կարևոր նշանակություն ունեին բաղնիքները: Որպես կանոն, արևելյան խոշոր քաղաքներում գոյություն են ունեցել մի քանի տասնյակ բաղնիքներ: Առավել ճշգրիտ տվյալներ մեզ հայտնի են սիրիական քաղաքներում եղած բաղնիքների մասին: Օրինակ՝ Հալեպում ԺԳ դարի կեսերին գործել է 138 հասարակական բաղնիք¹:

Միջին Ասիայի քաղաքներում գործող բաղնիքների քանակը նույնպես մեծ է եղել: Ուսումնասիրողները վկայում են, որ Սամարղանդ քաղաքը ԺԲ—ԺԳ դարերում ունեցել է 60—80 բաղնիք, իսկ նրա միջնաբերդ Աֆրասիաբը՝ 3—4²:

Անդրկովկասի քաղաքներում նույն պատկերն է: Հայաստանում դրանց քանակը նույնպես շատ է եղել: Բագրատունիների մայրաքաղաք Անիում, բացի պալատական կոչվող բաղնիքից, որն ունեցել է յոթ բաժանմունք, պեղումներով հայտնաբերվել է ևս հինգ բաղնիք³: Համոզված ենք, որ այնտեղ պեղումները շարունակվելու դեպքում դրանց քանակը կավելանա: Բաղնիքներ են ունեցել նաև միջնադարյան Դվինը և մյուս քաղաքները⁴:

Լոռի քաղաքի միայն միջնաբերդում խնդրո առարկա բաղնիքները երկուսն են, այն էլ՝ կառուցվածքով բարդ ու բազմանշանակ:

ԱՈՒՋԻՆ ԲԱՂՆԻՔ⁵: Ուսումնասիրողները, համարյա առանց բացառության, կարծել են, թե Լոռի քաղաքի միջնաբերդի այս բաղնիքն ունեցել է պարզ կառուցվածք և բաղկացած է եղել ընդամենը երեք բաժանմունքից, դրանք են. հանդերձարան, լողասրահ և ջեռուցարան-հնոց: Մեր կատարած պեղումները ի հայտ բերեցին ինժեներական բավականին բարդ կառուցվածք: Այն կարելի է համեմատել միջնադարյան Հայաստանի ամենանշանավոր կոմունալ-կենցաղային կառույցների հետ, մասնավորապես, Անիի բաղնիքների հետ (պալատական բաղնիք, Տիգրան Հոնենցի և այլն)⁶:

Մինչև պեղումների արդյունքների հայտնի լինելը միջնադարյան Հայաստա-

¹ St'u J. Sauvaget, Alep. Essai sur le developpement d'une grande ville syrienne des origines au milieu du XIX-e siecle, v. 1, Paris, 1941, էջ 143:

² St'u A. M. Белевичский, И. Б. Бейтович, О. Г. Большаков, Средневековый город Средней Азии, Лен., 1973, էջ 309:

³ St'u Օ. X. Халтачян, Гражданское зодчество Армении, М. 1971, էջ 212:

⁴ St'u Կ. Գ. Ղաֆարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Երևան, 1952, էջ 136—138: **И. Орбели**, Бани и скomorox XII века, см. Избранные труды, Ереван, 1963, с. 316—322: **Օ. X. Халтачян**, Средневековые бани Армении, см. Сов. Археология 1960, ном. 1, с. 208—226.

⁵ Լոռի քաղաքի միջնաբերդի տարածքում գոյություն ունի երկու բաղնիք: Ուսումնասիրողները, մինչ պեղումների արդյունքների հայտնի լինելը, դրանք անվանել են մեծ և փոքր բաղնիքներ՝ ելնելով ավերակների պահպանված մասի դիտարկումներից: Մեր կատարած պեղումներից հետո պարզ դարձավ, որ նրանց զբաղեցրած տարածքները համարյա հավասար են եղել իրար, ուստի հրաժարվեցինք նման բաժանումից և նպատակահարմար համարեցինք պայմանականորեն նրանցից մեկն անվանել առաջին, իսկ մյուսը, որ գտնվում է Չորագետի կիրճի եզրին, երկրորդ:

⁶ St'u Հ. Խաղախյան, նշվ. աշխ., էջ 210—216:

նի ճարտարապետության լավագույն գիտակներից մեկը՝ Հ. Խալփախյանը, նկատի ունենալով Լոռի քաղաքի՝ այս բաղնիքի հանդերձարանի զբաղեցրած շատ մեծ տարածքը, այն կարծիքն է հայտնել, որ դրա մի մասը կարող էր նախամուտք ծառայել⁷։ Մեր կատարած պեղումները հաստատեցին այդ ենթադրությունը։ Իրոք որ, շինարարները նախկինում կառուցել են մի փոքրիկ նախամուտք՝ շուրջ 6 մ² մակերեսով (3.25x1.8 մ)։ Այն հավանաբար նախատեսված էր հանդերձարանի և դրսի հետ որպես միջանկյալ կառույց, որը հանդերձարանի ներսում կապահովեր համեմատաբար կայուն ջերմություն։ Դրանից բացի, նախամուտքի և լողասրահին հարող պատի միջև կա մի փոքրիկ սենյակ, որն ունի 1.8 մետր երկարություն և 1.5 մետր լայնություն՝ ընդամենը 2.7 մ² մակերեսով։ Այս սենյակի հարավարևմտյան անկյունում՝ հանդերձարանի պատին կից, բացվեց մի փոքրիկ ջրավազան (0.43x0.37 մ)։ Նրա շրջապատը շարված էր հարթ սալաքարերով։ Հատակը և կողային սալաքարերը պատված էին ջուր չանցկացնող բարձրորակ շաղախով և հարթ սվաղով։ Պեղումներով հայտնաբերվեցին խնդրո առարկա աղբյուր-ջրավազանին ինչպես ջուր մատակարարող, այնպես էլ հեռացնող կավե ոչ մեծ տրամագիծ ունեցող փողոկներ, որոնցից առաջինը՝ մատակարարողը, ավերված էր, իսկ ջրահեռացմանը լավ էր պահպանվել։

Նման տիպի աղբյուր-ավազանի գոյությունը միջնադարյան Հայաստանի՝ մեզ հայտնի բաղնիքների հանդերձարաններում հանդիպում է առաջին անգամ։ Բայց նմանատիպ երևույթի մենք ծանոթ ենք առավել վաղ ժամանակաշրջանի բաղնիքներից։ Դա Գառնիի տարածքում 1953 թ. պեղված խճանկար հատակով արքայական բաղնիքն է, որի հանդերձարանի անկյունում կառուցված է սառը ջրի մի փոքրիկ ջրավազան։ Ուսումնասիրողներն այն թվագրում են մ. թ. երրորդ դարով⁸։ Հնարավոր է, որ միջին դարերում չէին մոռացվել ու ճանաչված ժամանակաշրջանի կոմունալ-կենցաղային շինությունների կառուցողական որոշ ձեռքբերումներ, և այս ձևով կիրառվում էին նոր պայմաններում։

Ուսումնասիրվող բաղնիքների նախամուտքը մի փոքրիկ դռնով հաղորդակցվում է հանդերձարանի հետ։ Պետք է նկատել, որ բաղնիքների բոլոր մուտքերը տեղադրված չեն միևնույն առանցքի վրա, չնայած դա առավել հարմար կլիներ։ Շինարար վարպետները բաղնիքի ներսի տաք օդի կորուստը նվազագույնի հասցնելու նպատակով աշխատել են բոլոր մուտքերը տեղադրել տարբեր առանցքների վրա։ Մասնավորապես, հանդերձարանի մուտքը տեղադրել են քիչ դեպի ձախ։

Բաղնիքի հանդերձարանը զբաղեցրել է բավական ընդարձակ տարածություն՝ 41 մ² (6.3x6.5 մ)։ Հանդերձարանի մեծությունը պայմանավորված էր այն բանով, որ միջնադարյան բաղնիքները նախատեսված էին ոչ միայն լողանալու համար, այլև ինչպես նշում է ակադեմիկոս Հ. Օրբելին⁹, բաղնիքների հանդերձարաններում հավաքվում էին տվյալ քաղաքի գործարար մարդիկ, կնքվում էին առևտրական պայմանագրեր, տեղի էին ունենում ընկերական գրույցներ, ցուցադրվում էին ներկայացումներ, զբաղվում էին ազգային տարբեր խաղերով (ճատրակ, տամա և այլն)։ Այդ նպատակների համար, բնականաբար, պետք է որ բաղնիքների հանդերձարանները իրենց մակերեսով գերազանցեին լողասրահներին։ Նման սկզբունքով է կառուցված նաև Լոռի քաղաք-ամրոցի մյուս բաղնիքը, որի մասին խոսք կլինի ստորև։

Բաղնիքի հանդերձարանի բավականին մեծ տարածություն ունեցող ծածկի

⁷ Տե՛ս Օ. Խ. *Халпахчи, Средневековые бани Армении*, էջ 225։

⁸ Տե՛ս Բ. *Аракелян*, *Гарни II*, Երևան, 1957, էջ 23—27։

⁹ Տե՛ս Ի. *Орбели*, *Баня и скоморох XII века*, см. *Памятники эпохи Руставели*, Ленинград, 1938, էջ 159։ Հետաքրքիր է, որ նույն սկզբունքը տարածված էր նաև Միջին Ասիայի խոշոր ու զարգացած քաղաքների բաղնիքներում։ Դրանք ուսումնասիրող մասնագետները գտնում են, որ բաղնիքները մզկիթներից հետո ամենաշատ այցելուներ ունեցող հասարակական վայրերն էին (տե՛ս *А. М. Беленицкий, И. Б. Бегтович, О. Г. Большаков, Средневековый город Средней Азии*, с. 309)։ Նույն կարծիքն է նաև Հ. Խալփախյանը (տե՛ս նշվ. աշխատությունը)։

իրականացումը, բնականաբար, պետք է որ կապված լիներ լուրջ դժվարությունների հետ: Շինարարներն այստեղ կիրառել են միջին դարերում ընունված քաղաքացիական շինությունների ծածկի ամենաբնորոշ ձևը՝ հազարաշենը: Դա հաստատվում է հանդերձարանի ներսում իրարից հավասարապես հեռու տեղադրված չորս խոշոր քարե խարիսխների առկայությամբ, որոնք պեղումների ժամանակ հայտնաբերվեցին փոքր-ինչ տեղաշարժված վիճակով: Դրանք ծառայել են փայտե սյուների համար: Ճիշտ է, վերոհիշյալ քարե խարիսխներն աչքի չեն ընկնում իրենց բարձրարվեստ մշակումով, բայց պետք է նկատել, որ բաղնիքի ողջ շինությունն իրականացված է կոպտատաշ քարերով: Հետևաբար խարիսխների կիսամաշ լինելը միանգամայն բնորոշ է ողջ կառույցին:

Հանդերձարանի հատակը շարված է մեծ չափերի թրծած աղյուսների (20x20x5 սմ) և կրաշաղախի համադրությամբ: Տեղ-տեղ քանդված աղյուսաշար հատակը հետագայում լրացվել է քարե սալերով:

Հանդերձարանի տաքացման խնդիրը մեզ համար մնաց չպարզաբանված, որովհետև հատակը, ինչպես ընդունված էր ամտիկ և միջնադարյան ժամանակաշրջաններում, կառուցված չէր կրկնակի սկզբունքով, որպեսզի տաքացվեր հնոց-ջեռուցարանից՝ տաք օդի և ծխի օգնությամբ: Այդ սկզբունքները կիրառել են լողասրահների հատակների կառուցման ժամանակ, ինչպես կտեսնենք ստորև:

Բացի այդ, հանդերձարանի պատերի անկյունային մասերում չհանդիպեցին ծխնելույզի նպատակով օգտագործվող համապատասխան անցքեր, որոնց գոյությունը կապացուցեր հանդերձարանի տաքացման եղանակը: Միգուցե շինարարները նկատի են ունեցել այն հանգամանքը, որ հանդերձարանի երկու պատերի շուրջ 2/3 մասը դրսից ծածկված է եղել հողով, իսկ մյուս պատերը կից էին լողասրահներին և նախամուտքին: Հավանաբար այդքանը միանգամայն բավարար էր հանդերձարանում կայուն ջերմաստիճան ունենալու համար: Իսկ հատակը, միանգամայն բնական է, ծածկվում էր խսիրներով ու կարպետ-մինդարներով, որպեսզի աղյուսների ու սալաքարերի սառնությունը տհաճություն չպատճառեր: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ բաղնիք այցելողները հանդերձարանում անցկացնում էին իրենց հանգիստը բավական երկար ժամանակ, ուստի տրամաբանական է, որ մարդիկ թեթև հագնված լինեին, որի պարագայում արհեստական ջերմության կարիք շատ չէր զգացվի:

Ուսումնասիրվող բաղնիքի հանդերձարանի լուսավորության խնդիրը լուծվել է հազարաշեն կառույցներին բնորոշ եղանակով՝ երդիկներով: Իրավամբ, հարց է ծագում. քանի՞սմ են եղել երդիկները: Դժվար է պատասխանել, քանի որ ծածկը չի պահպանվել: Հաշվի առնելով կից լողասրահի առաստաղի մեջ թողնված երդիկների դասավորությունը՝ կարելի է միգուցե ենթադրել, որ դրանց թիվը պետք է լիներ հինգից յոթը, առավելագույնը՝ ինը, որոնցից կենտրոնականը՝ մեծ, իսկ շրջապատինը համեմատաբար փոքր տրամաչափի:

Հանդերձարանի հյուսիսարևմտյան անկյունից դեպի լողասրահ բացվում է մեկ այլ մուտք, բայց որը, սակայն, անմիջապես չի հաղորդակցվում նրա հետ: Այստեղ կառուցված են երկու բաժանմունքից բաղկացած փոքրիկ սենյակ-հարկաբաժիններ, որոնց չափերն են՝ 6 մ² և 5.4 մ² (համապատասխանաբար՝ 3.3x1.8 և 3x1.8 մետր): Առաջինը լավ սալախատակված է, իսկ երկրորդի հատակը չի պահպանվել: Շատ դժվար է որոշել, թե այս երկու փոքրիկ սենյակներն ինչ նպատակի են ծառայել: Եթե ընդունենք, որ դրանցից առաջինը ծառայել է ուղղակի լողասրահի և հանդերձարանի միջև իբրև միջանցք-նախամուտք, որտեղ լողացողները կարող էին չորացնել իրենց մարմինը կամ նախապատրաստվել լողասրահ մտնելու, ապա երկրորդ սենյակի գոյությունը անհասկանալի է մնում: Այս պարագայում հավանական ենթադրությունն այն է, որ վերջինս ծառայել է լողացողներին անմիջապես սպասարկող անձանց (քիսաչիների) համար: Պատահական չպետք է համարել այն հանգամանքը, որ այստեղ գտնվեցին հասարակ խեցեղենի առանձին օրինակներ, որոնք օգտագործվում էին քարե տաշտերից ջուր վերցնելու համար: Բա-

ցի այդ, Ամբերդի բաղնիքն ուսումնասիրող Հ. Օրբելին վկայում է, որ Արևելքի բաղնիքներում նյութական հնարավորություն ունեցողները լողանալիս իրենց մարմինն օծում էին բազմապիսի անուշահոտ յուղերով կամ մերսում տարբեր օծանելիքներով: Հնարավոր է, որ այդ փոքրիկ սենյակը ծառայեր վերոհիշյալ օծանելիքների և լողանալուն անհրաժեշտ այլ պարագաները պահելու համար:

Հիշյալ երկու փոքրիկ սենյակների ծածկերը իրականացվել են կամարների օգնությամբ՝ թաղերի միջոցով: Իսկ դրանց լուսավորության խնդիրը մնում է չպարզված:

Նկարագրված միջանցիկ սենյակից մուտք է բացվում լողասրահի մեջ (այն հիմա շարված է): Լողասրահը քառանկյուն կառույց է, որի երկարությունը 7.4 մետր է, լայնությունը՝ 5.6 մետր: Քանի որ լողասրահի ամբողջ մակերեսը (այն հավասար է=41.5 քառ. մետրի) ծածկելը կապված է եղել որոշակի դժվարությունների հետ, ուստի այն հյուսիսից հարավ անցնող միջնորմային պատով բաժանել են անհավասար մասերի: Հ. Խալիփախյանի կարծիքով լողասրահի¹⁰ միջով անցնող պատը կառուցել են ոչ միայն կառույցի տանիքի ծածկը իրականացնելը դյուրին դարձնելու, այլև լողասրահի տարբեր մասերում տարբեր ջերմաստիճան ստեղծելու համար: Պետք է ենթադրել, որ բարձր ջերմաստիճան կունենար լողասրահի փոքր բաժանմունքը, որը կից էր ջեռուցարան-հնոցին¹¹:

Լողասրահի բաժանմունքները նախկինում իրար հետ հաղորդակցվել են փոքր դռներով: Այժմ միջնորմ պատի մեծ մասը քանդված է՝ նրանից պահպանվել են չնչին մնացորդներ:

Բաժանմունքներից յուրաքանչյուրը ծածկել են գմբեթների ու թաղերի ինքնուրույն համակարգով: Այն մասը, որը հարակից է հանդերձարանին, ծածկել են զրմբեթով, իսկ կողքերից՝ թաղերով: Մյուս հարկաբաժինը, որը կից է ջեռուցարանին, ծածկել են երկու փոքրիկ գմբեթով ու նրանց միջև ընկած թաղով: Գմբեթները կառուցված են առանց թմբուկների, սֆերիկ առագաստների վրա: Ծածկի համար որպես շինանյութ օգտագործվել են մանր, աղյուսաձև կտրված տեղական քարը: Լուսավորության և օդափոխության համար գմբեթների մեջ թողնված են անցքեր-երդիկներ: Մեծ գմբեթի վրա՝ ինը, միջինի՝ յոթ, իսկ փոքրի վրա՝ երեք երդիկ:

Լողասրահը գմբեթների ու թաղերի օգնությամբ ծածկելը երկու իմաստ ուներ: Նախ՝ այդ ձևով հնարավոր է ծածկել համեմատաբար մեծ մակերես ունեցող կառույց, հետո՝ լողանալու ժամանակ առաջացած գոլորշին, հավաքվելով թմբուկի տակ, սառչում էր, վերածվում ջրի, կաթիլ առ կաթիլ պատերի վրայով հոսում ցած: Հակառակ դեպքում, եթե լողասրահը ծածկեին հարթ ծածկով, ապա սառը ջրի կաթիլները կընկնեին լողացողների վրա¹²:

Լողասրահի հատակը չի պահպանվել, բայց ակամատեսների պատմելով, այն շարված է եղել թրձած աղյուսներով (20x20x5 սմ), որոնք պատվել են անջրաթափանց կրաշաղախի բարդ բաղադրությամբ: Վ. Հարությունյանը ենթադրում է¹³, որ ջեռուցարանի ծուխը և տափը անցնում էին լողասրահի հատակի տակ ու տաքացնում այն: Տեղանքի մանրակրկիտ ուսումնասիրությունը մեզն է ենթադրության օգտին բավարար հիմքեր է տալիս: Լողասրահի հարավարևմտյան պատի մեջ մեզ հաջողվեց բացել մանր քարերով շարված, դեպի եթեր դուրս եկող խողովակաձև անցք: Այդ փաստն, անշուշտ, խոսում է լողասրահի հատակի տաքացման օգտին: Բայց դա հավանաբար լրիվ բավարար չէր կարող լինել ողջ լողասրահում համապատասխան տաքություն ապահովելու համար: Ուստի Լոռի քաղաքի շինարար վարպետներն առավելագույնս օգտագործել են նաև մյուս հնարավոր միջոցները:

¹⁰ Տե՛ս Հ. Խալիփախյան, նշվ. աշխ., էջ 226:

¹¹ Ջրամտակարարման հարցերի մասին տե՛ս **А. Джагларов**, Бани средневековой Армении и их теплотехнические особенности, "Историко-филологический журнал", 1968, N 3, 241-248.

¹² Այս և մեզն հարցերի մանրամասն քննությունը տե՛ս **Ա. Տաղազարյան**, նշվ. աշխ.:

¹³ Տե՛ս Վ. Հարությունյան, Լոռի բերդ-քաղաքը, ՊՐՀ, 1962, թիվ 3, էջ 70:

Նրանք տաք և սառը ջրի կապե փողրակները տեղավորել են ամբողջ արևելյան, հյուսիսային և հարավային պատերի մեջ, շուրջ մեկ մետր բարձրության վրա (այս հարցին կանոնադառնանք ստորև): Լողասրահի նման եղանակով տաքացումը հավանաբար ապահովում էր անհրաժեշտ 25—30 աստիճան ջերմություն:

Բաղնիքի ջեռուցարանը կամ հնոցը գտնվում է լողասրահի արևելյան կողմում: Այն թաղածածկ մի շինություն է, որն զբաղեցնում է ոչ այնքան մեծ մակերես (4.1x1.6 մ): Այն այժմ կիսավեր վիճակում է: Հնոցի հատակն ունի երկու հարթություն, որոնցից մեկը՝ հյուսիսային կողմում գտնվողը, լողասրահի հատակից բարձր է 70—80 սմ, իսկ մյուսը՝ ցածր է 30 սմ: Հետախուզական պեղումների ժամանակ ցածր հարթության վրա գտնվող բաժանմունքում հանդիպեցինք մոխրի հաստ շերտի¹⁴:

Լողասրահի և ջեռուցարանի միջև կա հաղորդակցվող մի պատուհան, որը հավանաբար ծառայել է կաթսայից ջուրը վերցնելու համար: Ըստ էության, ճիշտ է Հ. Խալիպխյանը¹⁵, երբ պնդում էր, որ այդ պատուհանը բացվել է հետագայում, այն ժամանակ, երբ ինչ-ինչ պատճառներով սկզբնական համակարգը, որը նախատեսված էր տաք ջրի մատակարարման համար, դեպի լողասրահ այլևս չէր գործում:

Բարձր հարթություն ունեցող բաժանմունքի հատակը և պատերը պատված են անջրաթափանց կրաշաղախի հաստ շերտով: Այստեղից կապե մի փողրակ թեքությամբ ուղղված է դեպի լողասրահը: Հ. Խալիպխյանը և ուրիշներ¹⁶ ենթադրում են, թե հնոցի մեջ բարձր հարթության վրա տեղադրված բաժանմունքը ծառայել է որպես սառը ջրի ավազան:

Մեր կարծիքով, այս ենթադրությունն այնքան էլ հավանական չէ, որովհետև բաղնիքի լողասրահին սառը ջուր մատակարարվել է նույն լողասրահի հյուսիսարևելյան անկյունում տեղադրված փողրակով: Դա պարզ դարձավ պեղումների շնորհիվ: Վերոհիշյալ փողրակի գոյության մասին տեղյակ չեն եղել նախորդ ուսումնասիրողները, ուստի նրանք հանգել են ոչ ճիշտ եզրակացության:

Ջեռուցարանի ցածր հատակով բաժանմունքը ծառայել է կաթսա կամ այլ հարմարանք դնելու համար, ուր տաքացրել են ջուրը: Իսկ այնտեղից տաք ջուրը ինչ-ինչ կերպ մղվել է բարձր հարթության բաժանմունք, որտեղից կապե փողրակով հասել է լողասրահ: Պետք է ենթադրել, որ սառը ջուրը կաթսայի մեջ տաքացնելու համար լցնում էին ձեռքով:

Ջեռուցարանից դեպի լողասրահ անցնող կապե փողրակը միացել է հատակից 0.9 մետր բարձրության վրա անցնող երկշարք կապե փողրակների վերին շարքին: Դա պարզ երևում է փողրակների մեջ տաք ջրի առաջացրած կրային բարակ շերտանստվածքից:

Փողրակներն իրենց նախնական տեղում վատ են պահպանված, բայց նրանց ուղղությունը և երկարությունը կարելի է լրիվ վերականգնել ճշգրտությամբ: Այն, սկսվելով լողասրահի հյուսիսարևելյան անկյունից, բաժանվում է երկու ուղղության: Մեկն անցնելով հյուսիսային պատի երեսով, միջնորմային պատին հասնելով բաժանվել է երկու ճյուղի, որոնցից մեկն ավարտվում է լողասրահի կենտրոնում՝ միջնորմ պատի վրա, մյուսը՝ չհասած հյուսիսարևմտյան անկյունին: Երկրորդ ճյուղը, նորից սկսվելով լողասրահի հյուսիսարևելյան անկյունից, հասնում է հարավային պատին, ապա անկյուն կազմելով, անցնում է նրա վրայով ու ավարտվում հարավարևմտյան անկյունից 1.5 մ հեռու մնալով: Երկկարգ խողովակաշարի երկրորդ շարքը տեղում չի պահպանվել, բայց այնուամենայնիվ, պարզ է, որ այն միացել է հյուսիսարևելյան անկյունում տեղավորված փողրակին: Վերջինս էլ հենց լողասրահին սառը ջուր է մատակարարել:

¹⁴ Հնոցի մեջ պեղված մոխրի շերտից պարզվում է, որ Լոռիում որպես վառելիք օգտագործել են հիմնականում փայտ, երբեմն նաև՝ աքար:

¹⁵ Տես Հ. Խալիպխյան, նշվ. աշխ., էջ 226:

¹⁶ Տես նույն տեղը, Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 69—70:

Մինչև վերջերս բոլոր ուսումնասիրողներին, այդ թվում նաև մեզ, անհայտ էր սառը ջրի հիմնական աղբյուրը, այսինքն՝ թե ո՞ր կողմից էր այն միանում լողասրահում տեղադրված փողոկներին: Այդ խնդիրը պարզաբանելու նպատակով պեղեցինք լողասրահի արևմտյան արտաքին պատի դրսի կողմը: Պարզվեց, որ սառը ջուրը 8 սմ տրամագիծ ունեցող կավե փողոկով մատակարարվել է լողասրահի հյուսիսարևմտյան անկյունային պատի միջով՝ մայր հողից 0.3 մ խորությամբ: Քանի որ բաղնիքն ընդհանրապես իր դիրքով շրջապատի նկատմամբ կիսագետնափոր է, ուստի լողասրահի ներսում սառը ջուրը մատակարարող խողովակը համընկնում է ներսի պատերի երեսին տեղադրված սառը ջրի փողոկների շարքի բարձրությամբ:

Խողովակաշարի ջրածորակների տակ դրվել են քարե մեծ տաշտեր, որոնց մեջ, տաք և սառը ջրերը խառնվելով, ապահովել են լողանալու համար անհրաժեշտ ջերմաստիճան: Ջուրն այդ տաշտերի միջից վերցրել են կավե կամ պղնձե ամաններով¹⁷: Նկարագրվող քարե տաշտերից երկուսն այժմ գտնվում են բաղնիքի բակում: Ականատեսների վկայությամբ, նրանցից չափերով փոքրը պատկանել է ուսումնասիրվող բաղնիքին: Նրա արտաքին չափերն են՝ 1.24x0.9x0.35 մետր, իսկ ներքինը՝ 0.9x0.6x0.25 մետր, որը կազմում է 0.13 մ³ տարողություն (շուրջ 130 լիտր ջուր): Այդքան ջուրը միանգամայն բավական էր մեկ մարդու լողանալու համար: Քարե տաշտի անկյուններից մեկում՝ հատակի հարթության վրա թողնված է մի նեղ անցք՝ ջուրը հեռացնելու համար:

Ուսումնասիրվող բաղնիքի համար որպես շինաքար հիմնականում օգտագործվել է տեղական կիսամշակ բազալտ: Կառույցի անկյունաքարերն ունեն համապատասխանաբար՝ 40x60 սմ բարձրություն և լայնություն: Պատերը շարված են կրաշաղախով, իսկ ներսից ծեփված են անջրանցիկ կրաշաղախի հաստ շերտով: Բաղնիքի արտաքին պատերի հաստությունը հասնում է մեկ մետրի, իսկ միջնորմայինինը՝ 65—70 սմ-ի: Նման հաստության պատերը լիովին կարող էին ապահովել կառույցի ամրությունը և պահպանել լողասրահների ու հանդերձարանների ներսում պահանջվող անհրաժեշտ ջերմությունը համեմատաբար երկար ժամանակ:

Բաղնիքը, հավանաբար, նախատեսված է եղել երկսեռ բնակչության համար, տարբեր օրերի հերթականությամբ, որովհետև, ինչպես է. Խալփախյանն է նշում, այդ կարգը տարածված է եղել միջնադարյան Հայաստանում և ընդհանրապես Անդրկովկասում¹⁸:

ԵՐԿՐՈՐԻ ԲԱՂՆԻՔ: Լոռի քաղաք-ամրոցի բուռն ծաղկման ժամանակաշրջանում (ԺԲ—ԺԳ դարեր) միջնաբերդի ներսում գործող միակ բաղնիքը հավանաբար չի բավարարել բնակչության վերնախավի պահանջարկին, ուստի իշխանավորները ստիպված են եղել Չորագետի կիրճի եզրին կառուցել մեկ այլ բաղնիք, որտեղ ստեղծել են շահագործման ավելի նպաստավոր պայմաններ:

Ուսումնասիրողներն¹⁹ այն կարծիքն են հայտնել, որ Լոռի ամրոցի այս բաղնիքը կարելի է դասել միջնադարյան Հայաստանի հասարակ հատակագծային կառուցվածք ունեցող բաղնիքների շարքը: Նման սխալ ենթադրության համար հիմք է ծառայել այն հանգամանքը, որ ուսումնասիրողները բաղնիքի մասին դատել են հիմք ընդունելով հողից դուրս պահպանված ավերակները: Այդ է պատճառը, որ նրանց կողմից կազմած գծագրերը չեն համապատասխանում իրականությանը²⁰:

¹⁷ Դմանիսի քաղաքի միջնադարյան քաղնիքն ուսումնասիրող Լ. Մուսխելիշվիլին սխալմամբ կարծելով, թե լողացողները մտնում էին տաշտի մեջ, զարմանում է, թե ինչպես էր մարդը տեղավորվում դրա մեջ (տե՛ս Լ. *Мусхеланишвили*, Раскопки в Дманиси, СС, 1940, N 6, с. 273):

¹⁸ Տե՛ս է. Խալփախյան, նշվ. աշխ., էջ 216:

¹⁹ Տե՛ս է. Խալփախյան, նշվ. աշխ., էջ 224—225: Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 70—71:

²⁰ Տե՛ս է. Խալփախյան, նշվ. աշխ., նկ. 6, գծագիր 6: Վ. Հարությունյան, նշվ. աշխ., թիվ 10 (հատակագիծ և կտրվածք):

Լոռի ամրոցն ուսումնասիրող արշավախումբը որոշեց պեղումներ սկսել այս բաղնիքի տարածքում, ուր պահպանվել էին թաղածածկ մի փոքրիկ սենյակ (2.0x3.7 մ) և եզրագծով անցնող պատերի մնացորդներ: Եվ այդ ամենը ծածկված էր քարակույտով և հողի հաստ շերտով:

Հնագիտական պեղումներից պարզվեց հետևյալը. Չորագետի կիրճի եզրին կառուցված բաղնիքն ընդգրկել է բավական մեծ տարածք և ճարտարապետական-հատակագծային առումով եղել է բարդ կառույց:

Այն ունեցել է տեղանքի բնական պայմաններին հարմարեցված հանդերձարան, տարբեր չափերի երեք լողասրահ, հնոց-ջնուցարան և երկբաժանմունք ջրամբար՝ սառը ջրի մշտական պաշար պահելու համար: Հյուսիսից հարավ բաղնիքի բաժանմունքներն ամբողջ արևելյան պատով միանում են քարածայրին այնպես, որ համապատասխան մասերում նրանք չունեն պատերի արտաքին երես: Իսկ հանդերձարանն ու մեծ լողասրահն արևմտյան պատով կառուցված են գետահայաց՝ ճիշտ անդունդի եզրին: Այդ հանգամանքը որոշ չափով հեշտացրել է բաղնիքի կեղտաջրերի հեռացման խնդիրը, որը լուրջ դժվարություններ էր առաջացնում միջնաբերդի կենտրոնում կառուցված առաջին բաղնիքի համար:

Բաղնիքը կառուցված է տեղական կիսամշակ բազալտ և ֆելզիտային քարերից: Աղյուսի տեսքով կտրված ֆելզիտային քարով է շարված բաղնիքի ողջ ծածկը, ներառյալ ջրամբարը: Ծինության անկյունային հանգույցները, բնականաբար, շարված են խոշոր քարերով (բազալտ): Իսկ պատերը ներքուստ ամբողջությամբ պատվել են անջրաթափանց կրաշաղախի հաստ շերտով: Կրաշաղախը պահպանվել է մասնակիորեն:

Ուսումնասիրվող բաղնիքի բոլոր բաժանմունքների ծածկերն իրականացվել են թաղերի և սֆերիկ ծածկերի օգնությամբ: Այդ է հաստատում կանգուն պատերի վերին մասերի շարվածքը: Հավանաբար, ինչպես առաջին բաղնիքում, այնպես էլ այստեղ, գոյություն են ունեցել օդափոխության և լուսավորության համար ծածկերի մեջ թողնված անցքեր՝ երդիկներ:

Ճանապարհը հյուսիսարևմտյան անկյունից մտնելու է հանդերձարանին²¹, որտեղ եղել է մուտքը (այն այժմ քանդված է): Հանդերձարանը մի ընդարձակ քառանկյունի սրահ է, որի երկարությունը 6.8 մետր է, իսկ լայնությունը՝ 6.7 մետր (ընդամենը 45.5 մ²): Ծածկը հեշտությամբ իրականացնելու համար հյուսիսային և հարավային կողմերի պատերի կենտրոնում առաջ եկող ելուստներ են արված, որոնց վրա հենվել է երկթոփչք կամարը: Կամարի համար հենակետ է հանդիսացել բազմանիստ մշակումով բազալտե հսկա սյունը, որը պեղումների ժամանակ ի հայտ եկավ հանդերձարանի մեջ:

Հանդերձարանի արևմտյան պատից պահպանվել է հյուսիսարևմտյան անկյունը, մնացյալը փլվել է և թափվել Չորագետի կիրճը: Հարավային և արևելյան պատերը մասամբ են պահպանվել, որոնց մեջ գոյություն ունեն մեկական որմնախորշ:

Հանդերձարանի կենտրոնում՝ հատակից 80—90 սմ բարձրության վրա, գտանք բազալտ քարերով ու կրաշաղախով շարված նստարան, որի երեսը մույնպես պատված է բարձրորակ կրաշաղախով: Նմանօրինակ նստարաններ ունեցել են Անդրկովկասի և մույնիսկ հեռավոր Դրինի ԺԱ—ԺԳ դարերի բաղնիքները²²: Բացի քարե նստարանից, հանդերձարանի ներսում որևէ ուրիշ հարմարություն չգտնվեց:


Պեղումների ընթացքում գտնվեցին սակավաթիվ առարկաներ, այն է՝ ապակե անոթի մի բեկոր՝ պատրաստված կաղապարման եղանակով, որի վրա նշմարվում է լատինատառ արձանագրություն (այն թերի է և որևէ իմաստ չի արտահայտում),

²¹ Հ. Խալիպաչյանը և Վ. Հարությունյանը սխալմամբ կարծել են, որ սա լողարան է եղել: Տե՛ս նշված աշխատությունները և նրանց կից գծագրերը:

²² Տե՛ս Հ. Խալիպաչյան, նշվ. աշխ., էջ 226, Լ. Մոսխալովի, նշվ. աշխ., էջ 273, А. Яковлев, Средневековый Херсонес (XII-XIV вв.), см. МИА, N 17, М-Л, 1950, с. 78-86.

ջնարակած և հասարակ խեցեղենի աննշան քեկորներ, կավե ջնարակապատ տա-
լիկներ (բազմագույն), առավել շատ՝ կավե փողրակների մնացորդներ:

Հանդերձարանի հատակը չի պահպանվել, միայն անկյունային մասերում
պահպանված մնացորդներով կարելի է դատել նրա զբաղեցրած դիրքի մասին:
Հավանաբար, այն պատված է եղել թրծված խոշոր աղյուսներով և բարձրորակ
կրաշաղախով, ինչպես մյուս բաժանմունքները²³:



Բաղնիքի հանդերձարանի հյուսիսարևմտյան անկյուններում՝ պատերի մեջ,
նկատելի են ծխնելույզներ՝ շարված ոչ թե կավե փողրակներով, այլ մանր սալաքա-
րերով: Ծխնելույզների գոյությունը և հանդերձարանի պեղման ժամանակ նրա
հյուսիսարևմտյան անկյան հատակի տակ բացված ազատ տարածության գոյու-
թյան փաստը մեզ հիմք են տալիս ենթադրելու, որ Լոռի քաղաքի միջմաբերդի սույն
բաղնիքի հանդերձարանը, ինչպես Հայաստանի և Անդրկովկասի համաժամանա-
կյա մյուս բաղնիքները, ունեցել է կրկնակի հատակ: Ծուխը և տապը հնցոցի անցել
են երկու հատակների միջև գոյացած ազատ տարածություն, տուքացրել վերին
հատակը, ապա պատերի անկյուններում թողնված ծխնելույզներով դուրս եկել ե-
թեր: Լողասրահներից մեկին կից հարավային պատի մեջ հետագայում բացել են
մի դռնակ: Այն պարզ նկատելի է շարվածքի տվյալ հատվածում պահպանված
մնացորդներից:

Նկարագրվող հանդերձարանի հարավարևելյան անկյունից մի կամարակապ
մուտք բացվում է դեպի փոքրիկ միջանցք: Մուտքի չափերն են՝ 80 սմ լայնություն և
180 սմ բարձրություն: Միջանցքի հյուսիսարևելյան կողմից մի այլ մուտք հաղոր-
դակցվում է այժմ կանգուն փոքր մակերեսով (2.0x3.7 մ) կառույցի հետ²⁴:

Այս բաժանմունքը կառուցված է ոչ բարձր մի ժայռի տակ, հարմարեցված է
տեղանքի պայմաններին, ինչի համար կառուցող վարպետները ստիպված են եղել
թեթև նրա արևելյան պատը հիմնական ուղղությունից: Կառույցի ծածկն իրակա-
նացված է քաղի օգնությամբ, որի մեջ լուսավորության համար երկու երդիկ կա:

Մինչև պեղումները կառույցն ամբողջովին լցված էր քար ու հողով: Դրանք հե-
ռացնելուց հետո պարզվեց հետևյալը. հյուսիսային պատի մեջ նախկինում գոյու-
թյուն է ունեցել մի որմնախորշ, որը հետագայում, ավելի հավանական է ժԹ դա-

²³ Այս հանգամանքը հաստատում են տեղաբնիկներ Տելեմակ Նազարյանը, Երեմ Պապիկյանը և
ուրիշներ, որոնք ակամատես են եղել հատակի քանդմանը:

²⁴ Հ. Խալիպախյանը և Վ. Հարությունյանը սխալմամբ կարծել են, թե այս շինությունը ծառայել է
իբրև ջեռուցարան-հոնց (տե՛ս Հ. Խալիպախյան, նշվ. աշխ., էջ 226, Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 71:
Պեղումները հերքեցին նման ենթադրությունը):

րում, շարել են: Որմնախորշի հյուսիսային պատի մեջ պահպանվել է կավե երեք փողրակ, վերինը՝ 15 սմ տրամագծով, ներքևիները, որոնք կողք-կողքի են՝ 8 սմ: Նույն խորշի արևմտյան պատի մեջ կա 8.5 սմ տրամագծով մեկ այլ խողովակ, որը հաղորդակից է հանդերձարանի հյուսիսարևելյան անկյունում գտնվող ծխնելույզի հետ:

Նկարագրվող բաժանմունքի հատակը շարված է թրծած աղյուսներով (20x20x5 սմ), որոնք բարձրացված են հենասյուների վրա: Աղյուսաշար հատակը և պատերը ծածկված են բարձր որակի ջրադիմացկուն շաղախով:

Կառույցի այս հատվածի պեղումների ընթացքում երբեմն-երբեմն ի հայտ են գալիս կավե փողրակների մանրատված կտորներ, հասարակ և ջնարակած կավանոթների բեկորներ և ոչ արժեքավոր այլ առարկաներ: Կարևորն այն է, որ մոխրի հետքերը բոլորովին բացակայում էին: Դա նշանակում է, որ այն իսկապես չի եղել ջեռուցարան-հնոց: Պարզապես այդ բաժանմունքը նույնպես բաղնիքի լողասրահի դեր է ունեցել: Մանավանդ, որ պահպանված հատակը քիչ թեթևությամբ ուղղվում է դեպի կենտրոն, ուր, հավանաբար, գոյություն է ունեցել կեղտաջրերի հեռացման հարմարանք:

Նկարագրվող բաժանմունքի հարավարևելյան անկյունից դուռ է բացվել մի այլ, ավելի փոքր բաժանմունքի մեջ: Այդ բաժանմունքի երեք պատերը հարմարեցված են տեղանքին և ունեն միայն ներքին շարվածք, արտաքինը հպված է ժայռին: Այն ունի 190x190 սմ (3.6 քառ. մետր) չափեր: Պահպանված պատերի բարձրությունն անցնում է երկու մետրից: Սրա հատակը նույնպես, իրականացված է թրծված աղյուսներով և կրաշաղախով: Մաքրման ընթացքում հատակից ոչ շատ բարձր գտնվեցին ոսկրից մի սանր, ապակե անոթների չնչին բեկորներ ու կավե փողրակների մնացորդներ:

Այս բաժանմունքի պատերի տաքացումն իրականացվել է այն խողովակաշարի օգնությամբ, որը 150 սմ բարձրությամբ շրջանցում է սրահի հյուսիսային, արևելյան և հարավային պատերը ու փոքրիկ միջանցքի հարավային պատի միջով թեթևությամբ դուրս է գալիս երրորդ՝ ամենամեծ լողասրահ (գծագրում այդ խողովակաշարը ցույց է տրված կետագծիկներով): Մեր կարծիքով, այս բաժանմունքը նույնպես ծառայել է որպես լողասրահ ու հավանաբար ամենատաք բաժանմունքն է եղել: Դա պարզ է դառնում բաղնիքի հատակագծային ողջ կառուցվածքին ծանոթանալիս:

Վերը նկարագրված փոքրիկ միջանցքի հարավարևմտյան անկյունից կամարակապ մեկ այլ մուտք բացվում է դեպի լողասրահի երրորդ և ամենամեծ բաժանմունքը (4.1x5.2 մետր = 21.5 քառ. մետր): Բաղնիքի այս բաժանմունքը ծածկված էր հողի հաստ շերտով: Պեղումներով բացվեց նրա ամբողջական պատկերը: Այն քառանկյունի շինություն է, որն իր չափերով կրկնակի անգամ գիջում է հանդերձարանին: Պեղման ընթացքում վերին շերտում հանդիպում էին ջնարակված և հասարակ կավանոթների բեկորներ, երկաթյա գամեր և այլն:

Ի տարբերություն բաղնիքի մյուս լողասրահների և հանդերձարանների, այս բաժանմունքն իր նախնական վիճակի համեմատությամբ խոշոր փոփոխություն է կրել: Նրա մեջ նկատվում են հատակից բարձր, հարավից հյուսիս և արևելքից արևմուտք ձգվող աղյուսաշար, կրաշաղախով պատված՝ 0.85 մ հաստությամբ պատեր: Դրանք գուցե ժամանակին ծառայել են որպես նստարաններ լողասրահի մեջ, ինչպիսիք գոյություն ունեն Անդրկովկասի բոլոր բաղնիքներում: Այս տեսակետը պնդելը կամ ժխտելը համարժեք է:

Հատակից քիչ բարձր սկսած արևելյան պատի կենտրոնից, արևմտյան պատին է հասնում կավե փողրակների մի խողովակաշար (տրամ. 8 սմ): Վնասվածքից զերծ պահելու համար փողրակների վրա և կողքերին խմամքով շարված են թրծած աղյուսներ (20x20x5 սմ), իսկ խողովակների հանգույցները պատված են կրաշաղախով: Խողովակաշարի տեղն ու դիրքը մեզ հիմք է տալիս կարծելու, որ այն ավելի ուշ շրջանի է պատկանում: Հատկապես, որ արևելյան պատի մեջ խողովակա-

²⁵ Տե՛ս H. Mapp, Ани, Ленинград, с.71, Ա Ցավորում, 6շվ. աշխ., էջ 83—84:

չարի վրա աղյուսե բուխարի էր շարված: Բուխարու ձևը և շարվածքը կասկած չեն հարուցում, որ այն հետագայում է ավելացվել:

Լոդասրահի մուտքի դիմաց՝ հատակի վրա, 1.60 մ երկարությամբ, 35 սմ խորությամբ և 90 սմ լայնությամբ ջրավազանանման կառույց բացվեց: Այն շարված էր սալաքարերով ու աղյուսներով, որոնք ջուր չանցկացնող կրաշաղախով էին սվաղված: Ն. Մառը Աճիի պալատական բաղնիքում համանման ավազանի գոյությունը բացատրում է լողացողների՝ իրենց ոտքերը երկար ժամանակ գոլ ջրով ավազանների մեջ ընկղմելու հանգամանքով: Նման ավազան կա նաև Խերսոնի բաղնիքում²⁵:

Նկարագրվող լոդասրահի հատակը չի պահպանվել, և դժվար է դատել նրա նախնական տեսքի մասին: Հնարավոր է, որ լոդասրահի հատակը իր կառուցման տեխնիկայով չպետք է տարբերվեր հարակից լոդասրահների հատակներից:

Սույն կառույցի ընդհանուր հատակից 60—70 սմ ներքև դեպի Չորագետի կիրճն է ուղղվում 15 սմ տրամագծով կավե մեկ այլ խողովակաշար: Հավանաբար բաղնիքի լոդասրահներում կուտակված կեղտաջրերը սրանով հոսում էին Չորագետի կիրճը²⁶:

Երկրորդ բաղնիքի լոդասրահների մեջ՝ ջրածորակների տակ, ինչպես առաջինում, դրված են եղել քարե տաշտեր: Այս տաշտերից մեկը, որը տեղահան է արել 1931 թվականին Սամվել Նազարյանը՝ գյուղի դարբնոցում օգտագործելու նպատակով, այժմ գտնվում է առաջին բաղնիքի բակում: Այն իր չափերով գերազանցում է առաջին բաղնիքի համանման քարե տաշտին և միանգամայն բավարարում էր մեկ անձի լողանալու համար անհրաժեշտ ջրաքանակին:

Արշավախումբը երկրորդ բաղնիքի ջեռուցարան-հնոցի տեղը պարզելու նպատակով սկսեց մաքրել հանդերձարանի հյուսիսային կողմում ընկած տարածությունը: Պեղումներով հանդերձարանի հյուսիսային պատին անմիջապես կից հայտնաբերվեց մի կառույց, որը միջնորմային խուլ պատերով բաժանված էր երկու հավասար մասի: Կառույցը լրիվ մաքրելուց հետո պարզվեց, որ այն ժամանակին ծառայել է որպես սառը ջրի ջրամբար²⁷: Ջրամբարի ընդհանուր չափերն են 1.1x3.2 մետր (շուրջ 10 քառ. մետր): Նրա արտաքին պատերի հաստությունն անցնում էր 130 սմ-ից, որպեսզի դրանք դիմանային կուտակված ջրի ուժեղ ճնշմանը, իսկ պահպանված պատերի բարձրությունը 1 մ-ից մինչև 1.60 մ է: Առավել հնարավոր բարձրությունը ջրամբարից դեպի ժայռն ընկած հատվածն է՝ մինչև 1.80 մ:

Այսպիսով, եթե հաշվի ենք առնում այն հանգամանքը, որ ջրամբարի հատակից 1.35 մ բարձրության վրա հայտնաբերվեց 15 սմ տրամագիծ ունեցող կավե փողոակ, որտեղից ավելացած ջուրը հեռացվում էր դեպի կիրճը, ապա կստացվի, որ երկու բաժնում հնարավոր էր ամբարել 10 խորանարդ մետրից ավելի ջրի պաշար: Ջրամբարի հատակին հավասար բարձրության վրա կար նաև մեկ այլ փողոակ, որով անհրաժեշտության դեպքում բաց էին թողնում ամբարված ողջ ջուրը՝ այն մաքրելու կամ ախտահանելու նպատակով: Հնարավոր պետք է համարել նաև, որ ջրամբարը, հավանաբար ծածկի միջից մուտքի հնարավորություն ունեցող անհրաժեշտության դեպքում ներս մտնելու և մաքրելու համար:

Պեղումների ժամանակ, բացի ջրամբարի ծածկի թափված ֆելզիտային աղյուսատիպ քարերից և կրաշաղախից, ոչինչ չհայտնաբերվեց: Հատակը և պատերը շարված են տեղական բազալտով, որոնք սվաղված են անջրաթափանց կրաշաղախով: Այդ շաղախը պարունակում է գաջ, կիր, տուֆի մանր կտորներ և այլն: Միջնադարյան հայ վարպետները կրաշաղախը փայլելու աստիճան հարթեցրել են: Դա նպաստել է շաղախի ջրադիմացկուն լինելուն:

Ջրամբարը ծածկել են գմբեթի տեսքով, որը հաստատվում է հյուսիսարևելյան

²⁶ Ջանի որ բաղնիքում ջրահեռացման և տաք ու սառը ջրերի մատակարարման հարմարանքների միայն մի մասն է պահպանվել, ուստի դժվարանում ենք վերականգնել մախնական ճիշտ պատկերը, հետևաբար դրան չենք անդրադառնում:

²⁷ Վ. Հարությունյանը սխալմամբ ջրավազան է համարում սույն բաղնիքից 25—30 մետր դեպի հյուսիս գտնվող փլատակները (տե՛ս ՅՎ. աշխ., էջ 70):

անկյունում պահպանված պատի վերին շարքի շարվածքից:

Դժբախտաբար, մինչև հիմա այս բաղնիքի ջեռուցարան-հնոցի գտնվելու նախնական տեղը մնում է անհայտ: Միայն հնարավոր պետք է համարել այն ենթադրությունը, որ բաղնիքի ջեռուցարան-հնոցը կարող էր տեղադրված լինել Ձորագետի կիրճի եզրին՝ մեծ լողասրահի և հանդերձարանի հարավահայաց պատին կից: Դա նախ կնպաստեր հնոցի մոխրից հեշտությամբ ազատվելուն և երկրորդ՝ այն հնարավորություն կտար հնոցը տեղադրել առավել ցածր հարթության վրա ու հեշտացնլ լողասրահների և հանդերձարանի հատակների տաքացման խնդիրը: Վերջին ժամանակների փլուզումների հետևանքով, հնարավոր է, որ բաղնիքի հարավային պատի հետ միասին հնոցն ամբողջությամբ նույնպես Ձորագետի կիրճն է թափվել՝ անդառնալի կորչելով:

Այսպիսով, ավարտելով Լոռի քաղաք-ամրոցի միջնաբերդի զույգ բաղնիքների նկարագրությունը՝ պեղումներով ի հայտ եկած տվյալներով հանդերձ, կարելի է կատարել հետևյալ ընդհանրացումները:

Լոռի ամրոցում բաղնիքները կառուցվել են քաղաքի բուռն զարգացման շրջանում, այն է՝ Կյուրիկյան-Չաքարյան տիրապետության ընթացքում (ԺԱ—ԺԳ դարեր):

Ճարտարապետ-շինարարները, ինչպես միջնադարյան Հայաստանի մյուս բաղնիքներինը, նույնպես և Լոռիինը, հարմարեցրել են տեղանքին այնպես, որ քիչ վատելանյութ պահանջվի ջրի և հատակների տաքացման համար: Նույն իմաստն ունի այն հանգամանքը, որ բաղնիքների ներքին մուտքերն երբեք միևնույն առանցքի վրա չեն տեղադրել:

Ուսումնասիրվող բաղնիքների հանդերձարանները զբաղեցրել են ընդարձակ տարածություն, որովհետև դրանք ծառայել են նաև որպես գործարքներ կնքելու կամ ազատ ժամանցի վայրեր:

Լոռիի միջնաբերդի բաղնիքները կառուցվել են հիմնականում որպես վերերկրյա կառույցներ՝ ի հակադրություն այն բանի, որ հարևան մուսուլմանական երկրներում տվյալ նպատակի համար կառուցվող շինությունները գետնափոր էին:

Ուսումնասիրվող բաղնիքների բոլոր բաժանմունքների ծածկերն իրականացվել են գմբեթների և թաղերի ինքնուրույն համակարգով: Մի կողմից այն հեշտացրել է կառույցների ծածկերի խնդիրը, մյուս կողմից՝ հիզիենիկ է:

Պեղումները հնարավորություն են տալիս պնդելու, որ ինչպես Հայաստանի միջնադարյան մյուս բնակավայրերի բաղնիքները, նույնպես և Լոռի ամրոցինը, ենթարկվել են ներքին հարդարանքի: Եթե Անիի և Ամբերդի բաղնիքների լողասրահների պատերը ներսից ներկում էին տարագույն ներկերով, ապա Լոռիում այդ նպատակի համար երբեմն օգտագործել են ջնարակապատ փոքրիկ սալիկներ: Դրանք պատված են տարբեր գույնի՝ սև, սպիտակ, կաթնագույն, բաց կապույտ, կանաչ, երբեմն էլ դեղին ջնարակով: Դա եզակի երևույթ չէ: Նման սալիկներ գտնվել են նաև Վրաստանի Դմանիսի քաղաքի բաղնիքի պեղումների ժամանակ: Իսկ Անիից գտնված մնան ջնարակապատ սալիկների նախնական պատկանելության հարցում հստակություն չկա:

И. Г. Гарсия - Средневековые бани города-крепости Лори. - Результаты проведенных автором археологических раскопок в городе-крепости Лори дают возможность описать найденные на территории цитадели города средневековые бани, их сложную планировку, объяснить расположение бассейнов и раздевалок, систему набора и слива воды, обогрева, наличие небольших бассейнов с холодной и теплой водой.

Отмечая возможности, предоставленные материалом, автор делает краткие и обобщающие выводы относительно внутреннего убранства бань, а также благоустройства средневековых армянских городов.